«2019-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՀԿ-ՆԵՐԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈԱԼԻՑԻԱ և ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ

I. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

1. Նախադպրոցական հաստատություններում ներդնել էթիկայի, բարեխղճության և հակակոռուպցիոն թեմաների ուսուցում՝ հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները

Այդ նպատակով, հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները, նախադպրոցական հաստատություններում կազմակերպել հետևյալ միջոցառումները.

- նախատեսել էթիկայի և բարեխղճության ուսուցում,
- իրականացնել հակակոռուպցիոն հանդեսներ,
- իրականացնել հակակոռուպցիոն բնույթի բեմականացված ներկայացումներ,
- կազմակերպել հակակոռուպցիոն խաղեր,
- պատրաստել և կիրառել հակակոռուպցիոն բնույթի մուլտֆիլմեր,
- դաստիարակչական կազմին վերապատրաստել բարեխղճության և հակակոռուպցիոն թեմաներով:

2. Հանրակրթական հաստատություններում ներդնել հակակոռուպցիոն, էթիկայի և բարեխղճության ուսուցումներ

Այդ նպատակով, հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները, հանրակրթական հաստատություններում կազմակերպել հետևյալ միջոցառումները. ,

- բարեխղճության և հակակոռուպցիոն ուսուցումը ներառել այլ առարկաների դասավանդման շրջանակներում, օրինակ՝ հասարակագիտություն և այլն,

- հրավիրել ոլորտային փորձագետների՝ հակակոռուպցիոն պայքարի հաջողված օրինակներ և հակակոռուպցիոն պայքարի առաջնորդների կենսագրություններ ներկայացնելու նպատակով,
- մրցութային եղանակով կազմել և հրատարակել դասագիրք կամ ուսումնական ձեռնարկ բարեխղճության և կոռուպցիայի վերաբերյալ/վերանայել «Հասարակագիտություն» առարկայի դասագիրքը՝ կոռուպցիայի դեմ պայքարի տեսանկյունից,
- իրականացնել կոռուպցիայի և բարեխղճության վերաբերյալ գիտելիքների նախնական թեստավորում,
- մանկավարժական կազմին վերապատրաստել բարեխղճության և հակակոռուպցիոն թեմաներով:

3. Բուհերում, մասնագիտական կրթության հաստատություններում ներդնել հակակոռուպցիոն, էթիկայի և բարեխղճության ուսուցումներ

- նախատեսել բարեխղճության և հակակոռուպցիոն դասաժամեր՝ ըստ մասնագիտության, որի ընթացքում կներկայացվեն կոռուպցիայի դրսևորումները, առաջացման պատճառները, կոռուպցիայի դեմ պայքարի մեխանիզմները, կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային ձևաչափերը և փաստաթղթերը, հակակոռուպցիոն ոլորտում ՀՀ միջազգային պարտավորությունները և համանման թեմաներ: Օրինակ, համանման դասընթաց առկա է Եվրոպական տարածաշրջանային ակադեմիայի, Հայաստանում ամերիկյան համալսարանի մագիստրոսական կրթական ծրագրերում և այլն:
- անցկացնել հակակոռուպցիոն թեմաներով գիտաժողովներ,
- իրականացնել կոռուպցիայի և բարեխղճության վերաբերյալ գիտելիքների նախնական թեստավորում,
- իրականացնել ուսանողական խորհուրդներում վերապատրաստում,
- ստեղծել հակակոռուպցիոն լաբորատորիաներ, որոնք կզբաղվեն հակակոռուպցիոն միջոցառումների կազմակերպմամբ, հակակոռուպցիոն ծրագրերի իրականացմամբ և

կոռուպցիայի վերաբերյալ հետազոտություններով, իսկ իրավաբանական ֆակուլտետներում՝ նաև օրենսդրության հակակոռուպցիոն փորձաքննությամբ,

- դասախոսական կազմին վերապատրաստել բարեխղճության և հակակոռուպցիոն թեմաներով։

4. Իրականացնել հակակոռուպցիոն իրազեկման արշավներ՝ միտված կոռուպցիայի դեմ անհանդուրժողականության սերմանմանը

ՀՀ կառավարության ծրագրով նախատեսված է հանրային աջակցության ձեռք բերումը կոռուպցիայի դեմ պայքարում, ինչպես նաև այն, որ կոռուպցիան պետք է արժանանա լայն արգահատանքի, իսկ կոռումպացված պաշտոնատար անձինք՝ արհամարհանքի և դատապարտման,

- Պատրաստել և կիրառել հակակոռուպցիոն սոցիալական թիրախավորված գովազդներ,
- Համայնքներում բնակչության և տեղական հասարակական կազմակերպությունների հետ կազմակերպել հակակոռուպցիոն բնույթի հանրային քննարկումներ,
- Կոռուպցիայի դեմ պայքարի օրը՝ դեկտեմբերի 9, կազմակերպել համապետական ֆլեշմոբ,
- Կոռուպցիայի դեմ պայքարի օրը՝ դեկտեմբերի 9, կազմակերպել երիտասարդական համաժողով և պլենար նիստեր հակակոռուպցիոն թեմաներով,
- ծրագրավորել տարբեր համակարգչային խաղեր, որոնք կվերաբերեն կառուպցիայի դեմ պայքարին, որոնք կարող են լինել ինչպես տեղեկատվական բնույթի, այնպես էլ՝ իրավիճակային՝ հիմնված հակակոռուպցիոն սցենարների վրա,
- թատրոններում իրականացնել հակակոռուպցիոն բնույթի բեմականացված ներկայացումներ։

5. Կազմակերպել հակակոռուպցիոն համապետական մրցույթներ և ճամբարներ

- կազմակերպել նկարչության համապետական մրցույթ աշակերտների և ուսանողների համար,

- նախատեսել շարադրությունների համապետական մրցույթ աշակերտների և ուսանողների համար,
- կազմակերպել բանավեճ կոռուպցիայի վերաբերյալ, որին կարող են մասնակցել հանրակրթական հաստատություններին ընտրված թիմերով,
- նախատեսել հակակոռուպցիոն և բարեխղճության ճամբար. յուրաքանչյուր մարզից ընտրել նշյալ մրցույթների որոշակի քանակությամբ հաղթողների և հնարավորություն տրամադրել, որ վերջիններս անվճար հիմունքներով մասնակցեն ճամբարին։

6. Զարգացնել կոռուպցիայի դեմ պայքարում մասնագիտացված քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունները

Քաղաքացիական հասարակության ներգրավումը կոռուպցիայի դեմ պայքարում նախատեսված է՝

- ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ պայքարի կոալիցիայի առաջնահերթություններով՝ հակակոռուպցիոն վերապատրաստումների իրականացման եղանակով, որպեսզի վերջիններս ձեռք բերեն կարողություններ ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիայի վերանայման մեխանիզմներին մասնակցելու համար։
- Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի առաջնահերթություններով, քանի որ կարողությունների զարգացման արդյունքում քաղաքացիական հասարակության մասնագիտացված կառույցները հնարավորություն կունենան նաև մասնակցել տարածաշրջանային ցանցերին և կոալիցիաներին։
- Եվրոպական Միության առաջնահերթություններով, ի դեմս՝
    - «Արևելյան գործընկերություն՝ 2020 թվականին՝ 20 արդյունք» փաստաթղթի՝ որտեղ նշվում է, որ *քաղաքացիական հասարակության ներգրավումը հակակոռուպցիոն պայքարի բանալին է,*
    - Հայաստանի և Եվրոպական միության միջև կնքված «Հայաստանի հանրային ֆինանսների քաղաքականության բարեփոխումների ծրագիր» ֆինանսական համաձայնագրի, որտեղ նշված է Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի կարողությունների զարգացման կարևորության մասին։

Ընդ որում, առաջարկում ենք, որ սույն ենթաբաժնում նշված գործողությունները իրականացվեն ՔՀԿ-ների հետ համագործակցությամբ: Հարկ է նշել, որ Transparency International-ն իր զեկույցներում ևս նշել է, որ վերոնշյալ համագործակցությունը հաջողության հասնելու գրավականն է:[1]

1 Best practices in engaging youth in the fight against corruption, U4 expert answer, 2013

II. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

7. Բարելավել ազդարարների համակարգը

Ազդարարման համակարգի բարելավումը նախատեսված է՝

- ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ պայքարի կոալիցիայի առաջնահերթություններում, որում նշված է, որ անհրաժեշտ է պաշտպանել և խրախուսել ազդարարներին: Այս կապակցությամբ նաև ընդգծվում է, որ ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործության դեմ պայքարի գրասենյակն ավարտին է հասցնում ուղեցույցի պատրաստման աշխատանքները:
- Հայաստանի Հանրապետություն–Եվրոպական Միություն համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրում, որում ևս նշված է, որ անհրաժեշտ է պաշտպանել և խրախուսել ազդարարներին:

Այս նպատակով առաջարկվում է՝

- Նախատեսել փոխհատուցում ազդարարման համար,
- Ապահովել ազդարարների անվտանգությունը՝ լիազոր և իրավասու մարմին նախատեսելով միայն ՀՀ գլխավոր դատախազությանը՝ վերջինիս տրամադրելով ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակին մուտք գործելու բացառիկ իրավասություն,
- Ապահովել նշյալ հարթակով ոչ միայն հանցագործությունների, այլև՝ զանցանքների, էթիկայի խախտումների և այլնի համար ազդարարման հնարավորությունը,
- Պատրաստել և կիրառել ուղեցույցներ ազդարարների համար:

8. Ամբողջովին ներդնել իրական սեփականատերերի ինստիտուտը

Նշյալ ինստիտուտի ներդրումը կհանդիսանա բիզնեսի և քաղաքականության սերտաճման, մենաշնորհների, գերիշխող դիրքի և հակամրցակցային համաձայնությունների դեմ պայքարի գործիք: Նշյալն արծարծված է

- Հայաստանի Հանրապետություն–Եվրոպական Միություն համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով, որում նշված է, որ *կողմերը պարտավորվում են համագործակցել հետևյալ ուղղություններով՝ կոռուպցիայի դեմ*

պայքար և կանխարգելում՝ միտված իրավաբանական անձանց վերջնական շահառուների վերաբերյալ տեղեկատվության բացահայտմանը՝ առաջնորդվելով ՄԱԿ-ի 2003 թ. «Կոռուպցիայի դեմ պայքարի» կոնվենցիայով, Կոռուպցիայի դեմ պետությունների խմբի (GRECO) և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD)- ի առաջարկություններով:

- ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ պայքարի 2018-2020թթ. ռազմավարությունում,
- «Արևելյան գործընկերություն՝ 2020 թվականին՝ 20 արդյունք» փաստաթղթում, որում կարևորվում է հատկապես իրավաբանական անձանց իրական սեփականատերերի հանրային գրանցամատյանի վարումը:
- ՀՀ կառավարության ծրագրով:

Այս նպատակով առաջարկվում է

- հիմնել իրական սեփականատերերի ռեեստր,
- այն վարող մարմնին օժտել հարկային և բանկային գաղտնիքներին հասանելիություն ունենալու իրավասությամբ:

9. Վեր հանել հավատարմագրային կառավարման գործընթացում ծագող կոռուպցիոն ռիսկերը և քայլեր ձեռնարկել դրանց վերացման ուղղությամբ

Նշյալ խնդրի լուծումն անհրաժեշտ է, որպեսզի պայքարել բիզնեսի և քաղաքականության սերտաճման, մենաշնորհների և գերիշխող դիրքի դեմ: Այս ուղղությամբ ԵԽ Կոռուպցիայի դեմ պետությունների խմբի՝ ԳՐԵԿՈ-ն[2] ևս առաջարկում է համապատասխան միջոցներ ձեռնարկել՝ կանխելու համար առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնող պատգամավորների նկատմամբ կիրառվող և նրանց կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու կամ ձեռնարկատիրական գործունության շրջանակներում այլ վճարովի աշխատանք կատարելու սահմանափակումների շրջանցման հնարավորությունները: ԳՐԵԿՈ-ն այս

[2] ԵԽ Կոռուպցիայի դեմ պետությունների խմբի՝ ԳՐԵԿՈ-ի (GRECO) Հայաստանի գնահատման չորրորդ փուլի «Պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում կոռուպցիայի կանխարգելմանը» վերաբերյալ պարտավորությունների կատարման վերաբերյալ զեկույց, Ստրասբուրգ, 2017 թվականի դեկտեմբերի 4-8: Հասանելի է հետևյալ հղմամբ http://www.gov.am/u_files/file/xorhurdner/korupcia/greco.pdf

հանձնարարականի կատարումը գնահատել է մասամբ կատարված և ցանկանում է ՀՀ-ի կողմից իրականացված միջոցները որոշ ժամանակ գործողության մեջ դնելուց հետո լրացուցիչ գնահատել իրավիճակը, քանի որ անհամատեղելիության կանոնների գործնականում կիրառումը եղել է հանձնարարականի հիմնական պատճառը: Հնարավոր լուծումներից է հակակոռուպցիոն մարմինների դիտարկումների բաժինների արդյունավետ աշխատանքը:

10. Ներդնել և գործարկել շուկայում անկանոնությունները վերհանող համակարգչային ապահովման ծրագրեր (screens)

Շուկայում անկանոնությունները վերհանող համակարգչային ապահովման ծրագրերի ներդրումը ևս կհանդիսանա մենաշնորհների, գերիշխող դիրքի և հակամրցակցային համաձայնությունների դեմ պայքարի գործիք: Այն պետք է կիրառվի ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից: Անհրաժեշտ է նախատեսել անկախության երաշխիքներ:

11. Ներդնել հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրեր (Anti-corruption compliance program) իրավաբանական անձանց մոտ

ՀՀ քրեական օրենսգրքի նոր նախագծով սահմանվում է իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը: Նախագծի 129-րդ հոդվածի համաձայն՝ *իրավաբանական անձի քրեական պատասխանատվությունը բացառվում է, եթե նրա կողմից ձեռնարկվել են անհրաժեշտ և բավարար բոլոր միջոցները սույն օրենսգրքի հոդված 128-ի առաջին մասով նախատեսված անձանց կողմից հանցանքի կատարումը կանխելու նպատակով, սակայն հանցագործությունը կանխելու իրական հնարավորությունը բացակայել է:* Ուստի, հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրերի ներդրման ճիշտ ժամանակն է:

Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի առաջնահերթություններում սահմանված է կազմակերպություններում կոռուպցիոն ռիսկերի գնահատումը, հակակոռուպցիոն աուդիտի իրականացումը և խորհրդատվության տրամադրումը

կոռուպցիայի և բարեխղճության վերաբերյալ, թե ինչպես կարող են դրանք նվազեցվել: Նշյալը կարող է գրավիչ լինել մասնավոր ընկերությունների համար, քանի որ դա կարող է հանդիսանալ «մաքուր բիզնեսի» վարկանիշային համակարգի չափանիշ:

Նման ծրագրերի շնորհիվ իրավաբանական անձի աշխատակազմը ենթարկվում է համապատասխան հակակոռուպցիոն ուսուցումների, մշակվում են շահերի բախման, նվերների ընդունման և այլ քաղաքականություններ, և ստեղծվում է հատուկ ստորաբաժանում կամ կոնկրետ հաստիք, որը հաճախ անվանվում է Integrity Officer, որը զբաղվում է աշխատողների կողմից վերոնշյալ քաղաքականությունների պահպանման և բարեխիղճ վարքագիծ ցուցաբերելու նկատմամբ հսկողությամբ:

Նման ծրագրերի ներդրումը հնարավորություն է տալիս կամ՝ առհասարակ խուսափել քրեական պատասխանատվությունից, կամ՝ դիտել այն որպես մեղմացուցիչ հանգամանք: Նախնական փուլում կիրառել որպես օրենսդրական պարտադիր պահանջ միայն խոշոր առևտրային ընկերությունների նկատմամբ:

12. Բարելավել գույքի, եկամուտների և շահերի բախման հայտարարագրման համակարգը

Գույքի, եկամուտների և շահերի բախման հայտարարագրման համակարգի բարելավումը նախատեսված է՝

- Եվրոպական Միություն համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով,
- Եվրոպական Միության և Հայաստանի գործընկերության առաջնահերթություններով,
- «Աջակցություն Հայաստանում հանրային կառավարման բարեփոխումներին՝ Ավելի արդյունավետ և պատշաճ հանրային կառավարման միջոցով լավագույն ծառայությունների մատուցում» ֆինանսական համաձայնագրով:
- ՀՀ կառավարության ծրագրով:

  Այդ նպատակով առաջարկվում է՝
- Վերանայել և ընդլայնել հայտարարատու պաշտոնատար անձանց ցանկը,
- Վերանայել և ընդլայնել հայտարարատու պաշտոնատար անձանց հետ փոխկապակցված՝ հայտարարագրման պարտականություն ունեցող անձանց ցանկը,
- Շահերի բախման հայտարարագիր ներկայացնելու պահանջը նախատեսել

բարձրաստիճան պաշտոնատար անձ չհանդիսացող՝ նաև հայտարարատու պաշտոնատար անձանց նկատմամբ,

- Վերանայել հայտարարագրում սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու համար նախատեսված պատժամիջոցները,
- Վերանայել հայտարարագրման առարկան, վերացնել հայտարարագրման ոչ ենթակա շարժական և անշարժ գույքի վերաբերյալ չափանիշները, այդ թվում նաև՝ ֆինանսական շեմերը,
- Վերանայել հրապարակայնության ապահովման պահանջները,
- Վերանայել հայտարարագրերի վերլուծությամբ զբաղվող մարմնի լիազորությունները, այդ թվում՝ տրամադրելով ցանկացած քաղաքացուց *ad hoc* հայտարարագիր պահանջելու իրավասություն,
- Մշակել և ընդունել հայտարարագրերի վերլուծության մեթոդաբանություն, որը ներառում է նաև հայտարարագրերի ստուգման և աուդիտի անցկացման համակարգ՝ հիմնված անկանոնությունները և ռիսկայնությունները վեր հանող կարմիր դրոշակների վրա՝ միջազգային լավագույն փորձին համապատասխան,
- Իրավասու մարմնի կողմից վերլուծել և ստուգել նշյալ մեթոդաբանական վերլուծության վրա հիմնված բոլոր հայտարարագրերը,
- Ռիսկերի ստուգման արդյունքում հայտնաբերված բոլոր «կարմիր դրոշակակիր» նյութերն ուղղորդել գլխավոր դատախազություն:
- Ներդնել շահերի և ակտիվների էլեկտրոնային և հեշտ որոնվող հանրային ռեգիստր:

13. Վերանայել էթիկայի և վարքագծի նորմերը և ամրապնդել դրանց նկատմամբ վերահսկողության համակարգը

Էթիկայի և վարքագծի նորմերի բարելավումն ու ամրապնդումն արտահայտված են՝

- ԳՐԵԿՈ-ի առաջարկություններով, որով առաջարկում է էթիկայի և վարքագծի նորմերի պահպանման նկատմամբ վերահսկողության համակարգը զգալիորեն ամրապնդել

- Եվրոպական Միության և Հայաստանի գործընկերության առաջնահերթություններով, որով նույնպես նախատեսում են բարձր էթիկական ստանդարտների ապահովում հանրային գործընթացների ղեկավարման ընթացքում:

14. ԱԺ-ի վերահսկողական դերի կատարելագործում

Նշյալն արտացոլված է «Հայաստանի հանրային ֆինանսների քաղաքականության բարեփոխումների ծրագիր» ֆինանսական համաձայնագրով, որով սահմանվում է ԱԺ-ի վերահսկողական դերի կատարելագործում իր բյուջետային գրասենյակի միջոցով, մասնավորապես՝ նախատեսվում է

- Բյուջետային հանձնաժողովի կողմից արդյունավետ և որակյալ վերլուծամեկնաբանողական ծառայությունների տրամադրում՝ պատգամավորներին, պատգամավորական խմբերին, մշտական հանձնաժողովներին և քաղաքական խմբակցություններին աջակցելու նպատակով,
- Բյուջետային գրասենյակի աշխատակազմի կարողությունների զարգացում,
- Բյուջետային գրասենյակի իրավական հիմքերի և գործողությունների անկախ գնահատում համաձայն միջազգային ստանդարտների (Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության՝ ՏՀԶԿ-ի սկզբունքները խորհրդարանական ֆիսկալ ինստիտուտների մասին),

15. Օրենքի մակարդակով սահմանել կոռուպցիոն հանցանքները և զանցանքները

Ներկայումս, կոռուպցիոն հանցանքները սահմանվում են ՀՀ գլխավոր դատախազի հրամանով, այսինքն՝ ոչ օրենքի մակարդակով, իսկ զանցանքներն առհասարակ չեն սահմանվում:

16. Իրականացնել պաշտոնատար անձանց շարունակական վերապատրաստումներ բարեխղճության և հակակոռուպցիոն թեմաներով

ԳՐԵԿՈ-ն առաջարկում է *իրազեկվածության բարձրացման վերաբերյալ դասընթացներ իրականացնել դատավորների, պատգամավորների և դատախազների հետ:*

17. Տրամադրել գաղտնի մասնագիտական խորհրդատվություն պաշտոնատար անձանց

ԳՐԵԿՈ-ն առաջարկում է *անհրաժեշտության դեպքում տրամադրել գաղտնի մասնագիտական խորհրդատվություն դատավորներին, պատգամավորներին և դատախազներին:*

Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի առաջնահերթություններում ևս սահմանված է խորհրդատվության տրամադրումը կոռուպցիայի և բարեխղճության վերաբերյալ:

18. Մշակել և ներդնել հակակոռուպցիոն քաղաքականություններ տեղական ինքնակառավարման մարմիններում

Այս նպատակով առաջարկվում է՝

- Համայնքային ծառայողների, ավագանու անդամների ու համայնքների ղեկավարների համար դասընթացի մոդուլի մշակում:
- Կոռուպցիայի դեմ պայքարի, բարեխղճության/օրինավորության/բարեվարքության (ինթեգրիթի) վերաբերյալ ձեռնարկի մշակում:
- 2018 թվականի ընթացքում թվով 50 համայնքի ղեկավարի, թվով 150 ավագանիների, թվով 200 համայնքային ծառայողների 3 օրյա վերապատրաստում կոռուպցիայի դեմ պայքարի, օրինավորության/բարեվարքության (ինթեգրիթի) վերաբերող թեմաներով:
- Տեղական ինքնակառավարման վերաբերյալ օրենսդրության հակակոռուպցիոն փորձաքննություն:
- «Կոռուպցիան տեղական մակարդակում» վերտառությամբ ամենամյա զեկույցի պատրաստում:
- 2 քաղաքապետարաններում պիլոտային մունիցիպալ հակակոռուպցիոն ռազմավարության կամ պլանի մշակում:

19. Գնումների համակարգի բարելավում և վերահսկողություն

Գնումների համակարգի բարելավումը և դրա նկատմամբ վերահսկողությունը նախատեսված են՝

- Հայաստանի Հանրապետություն – Եվրոպական Միություն համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով,
- Եվրոպական Միության և Հայաստանի գործընկերության առաջնահերթություններով,
- «Հայաստանի հանրային ֆինանսների քաղաքականության բարեփոխումների ծրագիր» ֆինանսական համաձայնագրով, որում սահմանվում է *պետական գնումների համակարգի բարելավում, ի թիվս այլնի, մեկ անձից գնումների կատարման ընթացակարգի օգտագործման նվազեցման և վերջինիս կառավարումը ամրապնդելու միջոցով*
- Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի առաջնահերթություններում,
- ՀՀ կառավարության ծրագրում:

20. Նախատեսել ՀՀ-ի կողմից ստանձնած միջազգային հակակոռուպցիոն պարտավորությունների իրականացում, մոնիթորինգ և գնահատում

Առաջարկվում է հանրային վերահսկողության և մոնիթորինգի ենթարկել ներքոշարադրյալը, ինչը սահմանված է նաև Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի մոնիթորինգային ծրագրով

- 2015-2018թթ. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի և դրա իրականացման միջոցառումների ծրագրերը,
- ՀՀ-ի կողմից ստանձնած միջազգային հակակոռուպցիոն պարտավորությունների կատարումը և միջազգային կառույցների կողմից ՀՀ-ին ուղղված հանձնարարականները և առաջարկությունները, մասնավորապես՝ Միացյալ ազգերի կազմակերպության Կոռուպցիայի դեմ կոնվենցիային մասնակցության, ԳՐԵԿՈ, ՏՀԶԿ՝ Ստամբուլյան գործողությունների ծրագիր:
- ՀՀ կառավարության ծրագրերի հակակոռուպցիոն ասպեկտները,

- ՀՀ իրավական և դատական բարեփոխումների ռազմավարական ծրագրերի հակակոռուպցիոն ասպեկտները։

21. Գործող ռազմավարության և միջոցառումների ծրագրերով չիրականացված կետերի և միջոցառումների տեղափոխում նոր ռազմավարություն

Գտնում ենք, որ իրատեսական չէ ոլորտային միջոցառումների ծրագրերով նախատեսված բոլոր միջոցառումներն իրականացնել մինչև 2018 թվականը, ուստի կարծում ենք, որ անհրաժեշտ է միջոցառումների չկատարված մասը տեղափոխել նոր ռազմավարություն։

22. Ներդնել մասնավոր-հանրային համագործակցություն

Մասնավոր-հանրային համագործակցությունը սահմանվում է որպես «ներդրումային ծրագրերի փոխանցումը մասնավոր հատվածին, որոնք ավանդաբար իրականացվել կամ ֆինանսավորվել են պետական հատվածի կողմից։ Միջազգային փորձը կիրառում է նման համագործակցությունը նաև կոռուպցիայի դեմ պայքարում, օրինակ՝ Բուլղարիա։

23. Ընտրական գործընթացում քայլեր ձեռնարկել քաղաքական կոռուպցիայի վերացման ուղղությամբ

- Նախատեսել ընտրություններին մասնակցությունը որպես պարտականություն, ոչ թե՝ իրավունք,
- Վարչական ռեսուրսի չարաշահման վերաբերյալ կարգավորումների վերանայում և պատասխանատվության միջոցների խստացում,
- Ընտրատեղամասերին շուրջ քարոզչության իրականացման կարգավորումների վերանայում և պատասխանատվության միջոցների խստացում։
- Լոբբիստական գործունեության օրենսդրական կարգավորում և լոբբիստական ռեգիստրի ստեղծում։

24. Բարելավել իրավական ակտերի հակակոռուպցիոն փորձաքննության համակարգը

Սույն առաջարկի իրականացման նպատակով անհրաժեշտ է ներդնել հակակոռուպցիոն փորձագետների ակրեդիտացման համակարգ, ինչպիսին գործում է, օրինակ, Ռուսաստանում: Բացի այդ, վերապատրաստել հակակոռուպցիոն փորձաքննություն իրականացնող պաշտոնատար անձանց:

25. Բարձրագույն աուդիտորական ինստիտուտների նկատմամբ միջազգային ստանդարտների կիրառում

«Հայաստանի հանրային ֆինանսների քաղաքականության բարեփոխումների ծրագիր» ֆինանսական համաձայնագրով նախատեսվում է բարձրագույն աուդիտորական ինստիտուտների նկատմամբ միջազգային ստանդարտների կիրառում, մասնավորապես՝ Լիմայի և Մեխիկոյի հռչակագրերը և Թափանցիկության և Հաշվետվողականության սկզբունքները:

26. «Թափանցիկության խոստում» նախաձեռնությանը միացում

ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ պայքարի կոալիցիայի առաջնահերթությունների շարքին է պատկանում «Թափանցիկության խոստում» (Transparency Pledge) նախաձեռնությանը միացումը, ինչպես նաև հակակոռուպցիոն ջանքերի վերաբերյալ տեղեկատվության ազատության իրավունքի խթանումը: Ուստի առաջարկվում է՝

- Միանալ «Թափանցիկության խոստում» նախաձեռնությանը
- Նախատեսել միջոցներ ՀՀ պետական բյուջեից նշյալ նախաձեռնությամբ ստանձնած պարտավորությունները կատարելու ուղղությամբ:

27. Նախատեսել թափանցիկության հատուկ մեխանիզմներ միջազգային դոնորների կողմից ստացված գումարների վերաբերյալ

Հայաստանի Հանրապետություն–Եվրոպական Միություն համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով նախատեսվում է, որ ՀՀ-ն տեղեկացնի իր ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի հետ կապված ցանկացած խարդախության և

ակտիվ կամ պասիվ կոռուպցիայի դեպքերի մասին: Ուստի, առաջարկվում է.

- Նախատեսել թափանցիկության հատուկ մեխանիզմներ միջազգային դոնորների կողմից ստացված գումարների վերաբերյալ, մասնավորապես թե հասարակական, թե պետական սեկտորին պարտադիր պահանջ իրենց կայքում իրականացվող ծրագրի մասին հրապարակման վերաբերյալ, ինչպես նաև՝ պարտադիր հաշվետվության և աուդիտի իրականացման եզրակացության հրապարակման վերաբերյալ:

28. Վերանայել ռազմավարություններ և մոնիթորինգային զեկույցներ ընդունելու համակարգը

«Արևելյան գործընկերություն՝ 2020 թվականին՝ 20 արդյունք» փաստաթղթով նախատեսվում է. ***Կառավարության ռազմավարությունների և մոնիթորինգի զեկույցների ընդունում ԵՄ լավագույն փորձին համապատասխան և*** *վերոհիշյալ զեկույցների հրապարակում կառավարության պաշտոնական կայքէջում:*

29. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքին համապատասխան ենթաօրենսդրական ակտերի և դրանց կիրառման համար անհրաժեշտ մեթոդաբանության և ուղեցույցների ընդունում

«Արևելյան գործընկերություն՝ 2020 թվականին՝ 20 արդյունք» փաստաթղթով նախատեսվում է. ***Կառավարության կողմից «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքին համապատասխան ենթաօրենսդրական ակտերի և դրանց կիրառման համար անհրաժեշտ մեթոդաբանության և ուղեցույցների ընդունում՝*** *հաշվի առնելով հանրային կառավարման վերաբերյալ OECD/SIGMA սկզբունքները, ներառյալ՝ պաշտոնների դասակարգման նոր համակարգի և համալրման վերաբերյալ ենթաօրենսդրական ակտեր:*

30. Բարելավել անձնական տվյալների պաշտպանության օրենսդրությունը

«Արևելյան գործընկերություն՝ 2020 թվականին՝ 20 արդյունք» փաստաթղթով նախատեսվում է. ***Անձնական տվյալների պաշտպանության գործակալության կողմից անձնական տվյալների***

պաշտպանության օրենսդրության կիրառումը ապահովող ընթացակարգերի մշակում, ընդունում և հրապարակում, որը շրջանակներում անհրաժեշտ է *կենտրոնական հանրային կառավարման բոլոր մարմինների կողմից տվյալների պաշտպանությանը վերաբերող օրենսդրության կիրառումը ապահովող արտաքին ընթացակարգերի մշակում և վերահսկողություն վերոնշյալ ընթացակարգերի ընդունման տոկոսային հարաբերության նկատմամբ և մերժված առաջարկների մասին տեղեկացում:*

31. Վերանայել ՀՀ հարկային օրենսգիրքը

- Սահմանել եկամտի նվազագույն ողջամիտ շեմ, որի դեպքում այն ենթակա չի լինի հարկման եկամտային հարկով, նվազեցնել եկամտային հարկի դրույքաչափերը և դիտարկել պրոգրեսիվ հարկման անցման նպատակահարմարությունը,
- Շարունակել դիտել որպես շրջանառության հարկի օպտիմալ շեմ՝ նախկին 115 միլիոն ՀՀ դրամը մինչև մասնագիտական վերլուծություններով կապացուցվի, որ ՀՀ-ն անցել է անցումային ժամանակահատվածը, և ստվերային շրջանառությունը վերացել է, ինչպես նաև՝ նվազեցնել շրջանառության հարկի շեմը,
- Ամրագրել կայունությունը որպես ՀՀ հարկային համակարգի սկզբունք օրենսդրական մակարդակով բիզնես գործունեությունում կանխատեսելիության և որոշումների կայացման և պլանավորման որոշակիության ապահովման նպատակով,
- Նախատեսել շքեղության հարկ:

32. Ներդնել իրավաբանական անձանց վարչական կամ քրեական պատասխանատվություն՝ որպես պատժատեսակներ ներառելով նաև կանխարգելիչ բնույթի պատժատեսակներ, ինչպես, օրինակ, վարչական կամ դատական հսկողությունն է,
33. Ներդնել մասնավոր դետեկտիվների ինստիտուտը՝ ընդունելով «Մասնավոր դետեկտիվ գործունեության» մասին ՀՀ օրենք,
34. Նախատեսել մաքսային հսկողության բոլոր ուղիների համար ողջամիտ կարճ ժամկետներ՝ համապատասխան միջազգայնորեն ընդունված ստանդարտներին:
35. Լայնացնել ՏՄՊՊՀ կարողությունները, այդ թվում՝ օժտել հետաքննություն

անցկացնելու լիազորությամբ,

36. Կատարելագործել ՀՀ մրցակցության պաշտպանության օրենսդրությամբ սահմանված պետական օժանդակության վերահսկման մեխանիզմները և արտոնությունների տրամադրման համակարգը, այդ թվում՝ մշակել «Պետական օժանդակության վերահսկման մասին» ՀՀ օրենք,
37. Վարչական կոռուպցիան նվազեցնելու նպատակով գործարկել քաղաքացիական հասարակության կառույցների կողմից հակակոռուպցիոն կենտրոններ,
38. Հուղարկավարության ոլորտում կոռուպցիոն դրսևորումները վերացնելու ուղղությամբ՝ ստեղծել էլեկտրոնային համակարգեր,
39. Գույքի գերակա շահ ճանաչման գործընթացում կոռուպցիոն ռիսկերը վերացնելու ուղղությամբ կատարել օրենսդրական փոփոխություններ:

III. ԻՐԱՎԱՊԱՀ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ

40. Ձևավորել հակակոռուպցիոն ունիվերսալ մարմին

Նշյալն ամրագրված է

- Հայաստանի Հանրապետություն – Եվրոպական Միություն համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով, ըստ որի՝ *Եվրոպական Միությունը և Հայաստանը համաձայնվում են համագործակցություն իրականացնել կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությամբ, ինչը ենթադրում է նաև հակակոռուպցիան մարմինների հիմնադրում:*
- «Արևելյան գործընկերություն՝ 2020 թվականին՝ 20 արդյունք» փաստաթղթում, որը նույնպես կոռուպցիայի դեմ պայքարում կարևորվում է անկախ մասնագիտացված բարձրակարգ հակակոռուպցիոն մարմնի առկայությունն ու ամբողջությամբ գործարկումը:
- Եվրոպական Միության և Հայաստանի գործընկերության առաջնահերթություններով՝ այդ առումով առաջարկվում է օրենսդրության վերանայում:
- ՀՀ կառավարության ծրագրով:

Նշյալ հակակոռուպցիոն մարմինը պետք է օժտված լինի կոռուպցիայի կանխարգելման, հակակոռուպցիոն կրթության և նախնական քննության և օպերատիվ-հետախուզական գործառույթներով և լիազորություններով:

41. Ակտիվների վերականգնում

Կոռուպցիայի հետևանքով յուրացված ակտիվների վերականգման մակարդակի և վերականգնված ակտիվների հաշվետվողականության մակարդակի ավելացումը սահմանված է

- ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ պայքարի կոալիցիայի 2018-2020թթ. ռազմավարությամբ,
- «Արևելյան գործընկերություն՝ 2020 թվականին՝ 20 արդյունք» փաստաթղթում, որով: պետություններին հանձնարարվում է նախատեսել ԱԼԳ տարածաշրջանում հանցագործություններից ստացված եկամուտների արդյունավետ առգրավումը, բռնագրավումը և կառավարումը թույլատրող օրենսդրական շրջանակ, ինչպես նաև

հիմնադրել ակտիվների վերականգնման և կառավարման գրասենյակներ՝ ԱլԳ տարածաշրջանում հանցավոր ճանապարհներով ձեռք բերված/ չհիմնավորված հարստության նույնականացման, սառեցման, կառավարման և բռնագրավման գրանցամատյանի վարմամբ։

- Որոշ ասպեկտեր նախատեսված են նաև ՀՀ կառավարության ծրագրով։

Անհրաժեշտ է նախատեսել ակտիվների վերականգնման հստակ ծրագիր, ներառելով նաև քաղաքացիական՝

Մասնավորապես, առաջակում ենք

- Զարգացնել իրավական փոխօգնության ինստիտուտը։
- Հիմնադրել ակտիվների վերականգնման գրասենյակ և ստեղծել ակտիվների ռեեստր։
- Ներդնել ակտիվների վերականգնման քրեական վարույթի շրջանակներից դուրս քաղաքացիական *(*օրենսդրության շրջանակներում ակտիվների վերականգնման *in rem)* ընթացակարգեր, ինչպիսիք գործում են Միացյալ Թագավորությունում, Շվեյցարիայում, Իռլանդիայում, Իտալիայում, Գերմանիայում, Սլովենիայում, Կանադայում, ԱՄՆ-ում, Լիխտեյնշտեյնում և այլ զարգացած երկրներում։

42. Կոռուպցիոն գործերով մասնագիտացված դատարանի կամ հատուկ մասնագիտացված դատական կազմի ստեղծում

Հակակոռուպցիոն դատարան ասելով մենք հասկանում ենք դատարան, դատավոր կամ դատարանի մասնագիտացված կազմ, որը մասնագիտացված է կոռուպցիոն գործերում։ Ներկայումս շուրջ 17 երկրներում կան հատուկ մասնագիտացված հակակոռուպցիոն դատարաններ։

43. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց մասնակցությամբ կոռուպցիոն գործերի հետաքննությունների և դատավճիռների գրանցամատյանի վարում

Նշյալն առաջարկվում է «Արևելյան գործընկերություն՝ 2020 թվականին՝ 20 արդյունք» փաստաթղթում։

44. Պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալու/տալու միջնորդության քրեականացում

Ներկայումս ՀՀ օրենսդրությամբ քրեականացված է միայն պաշտոնատար անձի կողմից կաշառք ստանալը, վերցնելը և կաշառք ստանալու/տալու միջնորդությունները, և պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալը/տալը, սակայն պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալու/տալու միջնորդությունը քրեականացված չէ։

45. Պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողների կողմից ապօրինի վարձատրություն տալու կամ ստանալու նմանակում օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացման հնարավորության նախատեսում

ՀՀ օրենսդրությամբ թույլատրվում է կաշառք տալու կամ ստանալու նմանակում օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելը, սակայն նախատեսված չէ հնարավորություն պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողների կողմից ապօրինի վարձատրություն տալու կամ ստանալու նմանակում օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացման համար։ Այս հարցի շուրջ առկա է նաև Կ. Ժաժոյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը ներկայացված օրենսդրական խնդիրը հաղթահարելու համար։

46. Միջազգային դոնորների կողմից ֆինանսավորվող ծրագրերի յուրացման դեմ պայքար

Առաջարկվում է նախատեսել վերահսկողական լուրջ մեխանիզմներ միջազգային դոնորների կողմից ֆինանսավորվող ծրագրերի յուրացման դեմ պայքարում։ Հայաստանի Հանրապետություն–Եվրոպական Միություն համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով նախատեսված է հանձնարարական ՀՀ իշխանություններին, որ ՀՀ-ն քայլեր ներկայացնի միջազգային դոնորների կողմից, այդ թվում՝ ԵՄ-ի ֆինանսավորվող ծրագրերի յուրացման դեմ պայքարում։

47. Փողերի լվացման դեմ պայքար

«Արևելյան գործընկերություն՝ 2020 թվականին՝ 20 արդյունք» փաստաթղթում կոչ է արվում փողերի լվացման դեմ պայքարում ձեռնարկել հետևյալ միջոցները՝

- Փողերի լվացման դեմ պայքարի օրենսդրական շրջանակի համապատասխանեցում ԵՄ-ի 4-րդ Փողերի լվացման դեմ պայքարի դիրեկտիվին,
- Ֆինանսական հետաքննությունների արդունավետ գործիքների գործարկում, մասնավորապես՝ բանկային հաշիվների կենտրոնացված ռեգիստրների հիմնում,
- Ֆինանսական հետաքննությունների արդունավետ գործիքների գործարկում, մասնավորապես՝ Ֆինանսական օպերատիվ-հետախուզական և հետաքննական միավորների ուժեղացում:

48. Քննարկել «Grand corruption»-ի՝ որպես քրեական հանցագործություն նախատեսման նպատակահարմարության հարցը

«Կոռուպցիայի դեմ պայքարի» ՄԱԿ-ի կոնվենցիայի կոալիցիայի 2018-2020 թվականի ռազմավարության առաջնահերթություններով նախատեսվում է «Մեծ կոռուպցիայի» (Grand corruption)՝ որպես միջազգային հանցագործություն և վերջինիս լուծմանն ուղղված հատուկ միջոցների անհրաժեշտության ճանաչում:

49. Սահմանել անցումային արդարադատություն

ՄԱԿ-ի Անվտանգության Խորհուրդը սահմանում է անցումային արդարադատությունը որպես գործընթացների և մեխանիզմների համակարգ, որոնց միջոցով հասարակությունը փորձում է հաշտվել նախկինում տեղի ունեցող բազմաձավալ չարաշահումների ժառանգության հետ հաշվետվողականություն ապահովելու, արդարադատությանը ծառայելու և հաշտության հասնելու նպատակներով: Այն կարող է ներառել և դատավարական, և՝ ոչ դատավարական մեխանիզմներ՝ միջազգային ներգրավվածության տարբեր մակարդակներով (կամ առանց դրա) և անհատական հետապնդումներ,

փոխհատուցումներ, ճշմարտության որոնումներ, ինստիտուցիոնալ բարեփոխումներ, ստուգումներ և պաշտոնից հեռացումներ (vetting) կամ դրանց համադրությունը:

Առաջարկվում է քննարկել անցումային արդարադատության կիրառման ստորև թվարկված մեխանիզմներից յուրաքանչյուրի ընդունման նպատակահարմարությունը, որի արդյունքում նախատեսել նշյալ մեխանիզմները որոշները կամ բոլորը

- քրեական դատավարություններ՝ դատական գործերի վերաբացումը՝ ռեպրեսիվ իրավական ակտերի վերանայման/վերացման նպատակով,
- լուստրացիա՝ ձևական գործընթաց, որով նույնականացվում են և պաշտոնից ազատվում են այն անհատները, ովքեր պատասխանատու են եղել չարաշահումների համար, մասնավորապես՝ ոստիկանությունից, քրեակատարողական հիմնարկներից, զինված ուժերից և դատական համակարգից (vetting),
- ճշմարտության/ հաշտեցման հանձնաժողովներ և զեկույցներ,
- ռեպարացիոն ծրագիր